ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Իռլանդիայի Հանրապետություն, Դուբլին, 2019 թ. ապրիլի 29 - մայիսի 1

4. Հրավիրող կողմը

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (World Health organization),
Ծխախոտից ազատ երեխաներ (Tobacco Free Kids)

5. Գործուղման նպատակը

Ճանաչողական այց

6. Քննարկված թեմաները

ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության և Առողջապահության նախարարության ներկայացուցիչներից կազմված պատվիրակության համար Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ և ԱՀԿ ու TFK կազմակերպությունների համատեղ ջանքերով Իռլանդիայում կազմակերպվել է ճանաչողական այց, որի շրջանակներում Հայաստանի Ազգային ժողովի և կառավարության ներկայացուցիչները տեղում ծանոթացել են Իռլանդիայի փոխհամաձայնեցված և արդյունավետ հակածխախոտային քաղաքականությանը:

Իռլանդիան միջազգայնորեն ճանաչված է որպես ծխախոտի դեմ պայքարի գործում արդյունավետ միջոցառումներ իրականացնող երկիր: Ներկայում Իռլանդիայի իշխանությունների կողմից իրականացվող արդյունավետ հակածխախոտային քաղաքականության շնորհիվ երկրում ծխախոտի օգտագործման մակարդակը ամենացածրերից մեկն է աշխարհում: Այս երկիրը միջազգայնորեն ճանաչված է որպես ծխախոտի դեմ պայքարի գործում արդյունավետ միջոցառումներ իրականացնող երկիր: Ձգտելով ունենալ ծխախոտից ազատ հասարակություն՝ Իռլանդիան նպատակ ունի մինչև 2025 թվականը դառնալու ծխախոտից ազատ երկիր:

Այս առումով մեզ համար առավել հետաքրքիր էր Իռլանդիայի փորձն ինչպես առողջապահության քաղաքականության, այնպես էլ օրենսդրական դաշտերում:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Պատվիրակությունն այցելել է Իռլանդիայի առողջապահության նախարարություն, ինչպես նաև եղել է Իռլանդիայում գործող Tobacco Free Research Institute-ում և ուսումնասիրել հանրային վայրերում ծխախոտի ծխից ազատվելու Իռլանդիայի փորձը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Որոշվել է շարունակել երկկողմ շփումները ծխախոտի դեմ պայքարի ոլորտում՝ փորձի փոխանակման, օրենսդրական դաշտի մոտարկման ուղղություններով:

9. Առաջարկությունները

Առաջարկվել է իռլանդական կողմի հետ համագործակցել վերը նշված ոլորտում՝ օգտագործելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջնորդ դերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

03.05.2019 թ.